

գլխատման կը դատապարտուի. կ'առաջարկուի իրեն իսլամութիւն ընդունիլ՝ ազատուելու համար. բայց չընդունիր, ու կը յայտարարէ հայ քրիստոնեայ ըլլալը. կը գլխատուի ու կը թաղուի Պարզլըի գերեզմանոցը Թորոս կթղ. շիրիմին մօտ: — Ոմանք կը կարծեն թէ Կոմիտաս հռովմէական եկեղեցին ընդունած ըլլալուն հետեւանքով նահատակուած է. բայց յիշատակարանները կը հաստատեն թէ այդ զրոյցը չինծու է, և այս մասին յերկրուած պատմութիւնները, ինչպէս է Ալքերեանց Ստեփանոս վարդապետինը, բոլորովին անվաւեր են և հակասական:

1707ին՝ Կոմիտաս քհ. նահատակութեան թուականին զըրուած և վանի տնապատին մէջ պահուած անոր վկայաբանութիւնը, ինչպէս նոյնին Սամաթիոյ քահանայից ուղղած սրտայոյզ նամակը, և Մանիքեի Իրաւի օրինակները բացարձակապէս կը հերքեն Կոմիտաս քհ. վերագրուած պապադաւանութիւնը: Ան նահատակուած է պարզապէս իսլամութիւնը մերժած ըլլալուն համար: Վկայաբանութեան ընդօրինակութիւնը և մանրամասնութիւնները տեսնել (Ժամանակ. 1867. Թ. 118, 119, 120, 121):

Կոմիտաս քհ. Գործք Առաքելոցը ոտանաւորի վերածած է, ոտանաւոր քսնի ի գործս Առաքելոց խորագրով. և Կ. Պոլիս տպագրած է 1704ին: Գրքին վերջը կը յիշատակէ թէ՛ ինքը տեսած է պատմագրութիւն մը որուն մէջ գրուած էր թէ՛ 536 թուին, Յուսիմիանու կայսեր օրով, «հռչակեալ Արագորոս կիւսասարկաւ Սրբունայ եկեղեցւոյն Հռովմայ զարմանալի Ֆիլոսօֆոս և վարդապետ տաղաչափութեան» Գործք Առաքելոցը ոտանաւորի վերածած է. Կոմիտաս քհ. գիտնալով որ Հայոց մէջ չի գտնուիր այդպիսի գիրք մը, իր կողմէն Գործք Առաքելոցը ոտանաւորի կը վերածէ Ներսէս Շնորհալիի Յիսուս ողորկ երկասիրութեան հետեւելով: (Արարտ. 1908, էջ 896):

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՊՍ. ՍԿԵԻՌԱՅ. — ՄԶ. Թ. 532 ձեռագիրը ունի հետեւեալ յիշատակարանը. «Ած. ողորմի Կոստանդին Սկեռայ եպս. ին, և իւր հոգեւոր և մարմնաւոր ծնողացն և հաւատարմանն իւր ունի յիշատակ ի Ս. Աթոռս մէկ մագաբաթսը. Աւետարան արծթպտ.» Կոստանդին եպս. ի մականունը և թուականը յիշատակուած չըլլալով՝ կրնայ ենթադրուիլ որ Կատուկեցի (Պրօնագործ) Կոստանդին Բ. Կաթողիկոսն ըլլայ ան,